

ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (04.02.2013-13.06.2013) ԵՎ 17.06.2013-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հինգերորդ գումարման երրորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 7 չորսօրյա նիստ, և հունիսի 17-ին արտահերթ նստաշրջան՝ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 81 հարց, որից 55-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, 18-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների, 1-ը՝ ՀՀ կառավարության և ՀՀ ԱԺ պատգամավորների համատեղ նախագծեր, իսկ 7-ը պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր էին, որոնցից 1-ը՝ միջազգային պայմանագրերի վավերացման մասին հարցը՝ որպես ենթահարց ընդգրկում էր 19 միջազգային համաձայնագիր:

Հետագայում նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 52 հարցով, այդ թվում՝ 30 ՀՀ կառավարության նախաձեռնություն, 13 ՀՀ ԱԺ պատգամավորական նախաձեռնություն և 9 պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող այլ հարցեր: Օրակարգը լրացվել է նաև 24 միջազգային պայմանագրով:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 133 հարցերից 116-ը օրենքների նախագծեր կամ նախագծերի փաթեթներ էին, որոնցից աշնանային նստաշրջանի և դրանից հետո գումարված արտահերթ նստաշրջանի ընթացքում քննարկվել և ամբողջությամբ ընդունվել են 52-ը (41-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններն էին. 8-ը կառավարության որոշմամբ՝ անհետաձգելի, 10-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների նախաձեռնած, իսկ 1-ը՝ համատեղ նախագծեր էին): Միջազգային պայմանագրերից զատ քննարկվել է 9 պարտադիր և ըստ

անհրաժեշտության քննարկվող հարց: Ամբողջությամբ ընդունված 52 օրենքներից կամ օրենքի փաթեթներից 5-ը մայր օրենքներ են, որոնցից 3-ը կառավարության նախաձեռնություններ էին, 1-ը՝ պատգամավորական, ևս 1-ը՝ ՀՀ կառավարության և ՀՀ ԱԺ պատգամավորների համատեղ նախաձեռնություն:

Նստաշրջանի ընթացքում՝

- ԱԺ-ը հավանություն տվեց ՀՀ կառավարության ծրագրին:
- ԱԺ-ը 112 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով հաստատեց ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի ձևավորման կարգը:
- ԱԺ-ի որոշմամբ ապրիլի 9-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնի ստանձման հատուկ նիստ:
- Խաչատուր Քոքոբեյլյանը դուրս եկավ «Ժառանգություն» խմբակցությունից:
- ԱԺ-ը լսեց «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 6-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման, ընտրական օրենսգրքի խախտումների, առաջարկվող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաղորդագրությունը:
- Հաստատվեց Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:
- Քննարկվեց՝
 - Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի գործունեության ծրագիրը,
 - Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2013 թվականի տարեկան գործունեության ծրագիրը,
 - 2011 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» զեկույցը,
 - 2012 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու

իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» զեկույցը,

- ՀՀ կենտրոնական բանկի 2012 թվականի ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագիրը,
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2012 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը (գնաճի հաշվետվություն),
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2013 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագիրը,
- Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2012 թվականի տարեկան հաշվետվությունը:

Նստաշրջանի ընթացքում վավերացվեց 25 միջազգային պայմանագիր, այդ թվում՝ էներգետիկայի և առողջապահության բնագավառներում ծրագրերի իրականացմանը, ենթակառուցվածքների բարելավմանը, ներդրումների խրախուսմանը և մաքսային ընթացակարգերի պարզեցմանը, ինչպես նաև կանանց ձեռներեցության խթանմանը միտված վարկային և այլ համաձայնագրեր:

ՀՀ Ազգային ժողովը քվեարկությամբ մերժեց ՀՀ ԱԺ պատգամավորներ Ռուբիկ Հակոբյանի, Զարուհի Փոստանջյանի և Թևան Պողոսյանի՝ հեղինակների կողմից արտահերթ համարված «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և ՀՀ ԱԺ պատգամավորներ Ստեփան Դեմիրճյանի, Լևոն Զուրաբյանի, Գագիկ Զհանգիրյանի, Նիկոլ Փաշինյանի, Լյուդմիլա Սարգսյանի և Արամ Մանուկյանի «2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տասը անձանց սպանությունների, քաղաքացիական անձանց, ոստիկանության աշխատակիցներին ու զինձառայողներին հրազենային ու այլ մարմնական վնասվածքներ պատճառելու դեպքերով ՀՀ ոստիկանության, Հատուկ քննչական ծառայության և ՀՀ գլխավոր դատախազության ձեռնարկած միջոցառումների ու գործողությունների հիմնավորվածության և օրինականության հարցը ուսումնասիրող ՀՀ Ազգային ժողովի

ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծը:

Նստաշրջանի ընթացքում ԱԺ պատգամավորները ՀՀ կառավարությանը դիմել են 28 գրավոր և 54 բանավոր հարցով: «Ժառանգություն» և «Օրինաց երկիր» խմբակցությունները մեկական հարցապնդմամբ դիմել են ՀՀ կառավարությանը, որոնցից «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 105.1 հոդվածի համաձայն քննարկվել է միայն «Օրինաց երկիր» խմբակցության հարցապնդումը:

Հնչել է 125 պատգամավորական հայտարարություն, որոնցից 44-ը վերաբերում էր գործադիրի գործունեությանը: